ԿՐՕՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ ՄԻՐՈՆՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 28 Սեպտեմբեր, 2008թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Կը պատրաստես Սուրբ օծութեան համար իւղ...»
«Դա սրբութիւն է եւ ձեզ համար սրբութիւն էլ թող մնայ»
(Ելից Լ. 25, 32)

Սիրելի ուխտաւոր բարեպաշտ ժողովուրդ,

Երկնքի բարձունքներից այսօր վերստին սրբութիւն է իջնում, օրհնութիւն, շնորհ եւ խնդութիւն է բաշխւում մեր Հայրենիքին, մեր հոգիներին, համայն հայ կեանքին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ազգիս աշխարհասփիւռ զաւակների աղօթական մասնակցութեամբ Տէրունապատուէր խօսքի համաձայն միւռոն ենք օրհնում: Փառք, բիւր փառք եւ գոհութիւն Ամենախնամ Աստծուն:

Աստծոյ բարերար կամքով է, որ Վարագայ Սուրբ Խաչի տօնական օրը խնդագին հոգիներով սրբալոյս միւռոնի օրհնութեան համար համախմբուել ենք Միածնէջ մեր սրբավայրում, որը երկնային լոյսերով անվախճան ժամանակների համար ճարտարագծուել է որպէս մեր ժողովրդի հաւատքի վկայարան եւ ուխտի խորան: Դարեր ի վեր ուխտաւոր հոգիով առաջնորդուելով այստեղ՝ ազգս հայոց զօրանում ու նորոգւում է հաւատքով, տեսնում յաւէրժութեան իր լուսաճեմ ուղին, դէպի փրկութիւն, դէպի Աստուած իր ճանապարհը: «Զի սա լուսաւորէ զմեզ հաւատով - բուսուցանէ ի Տանն Աստուծոյ: ... զի սա նորոգէ զմեզ շնորհօք Հոգւոյն Սրբոյ եւ սնուցանէ եւ պտղաբերէ եւ դալարի պահէ» (Սիմէոն Երեւանցի Կաթողիկոս): Սուրբ Էջմիածնի աստուածապարգեւ հոգեսնունդ այս առաքելութիւնը Սուրբ Գրիգոր մեր Լուսաւորիչ Հայրապետի ժամանակներից սուրբ միւռոնով սփուում եւ բաշխւում է մեր եկեղեցիներին, մեր օճախներին, աշխարհասփիւռ հայ կեանքին:

Միւռոնօրհնութեան այս շնորհաբորոգ օրը մեր Արարչի հետ հաշտութեան խորհրդանիշ ձիթենու ճիւղի բերքին խառնեցինք բնութեան ամենից ազնիւ, բուժիչ եւ բուրումնաւէտ հիւթերը: Այս արդար նիւթին միախառնեցինք հին միւռոնը, որով սերընդէ սերունդ փոխանցում ենք մեր Տիրոջ օրհնած իւղը, խառնեցինք եւ նորաեփ միւռոնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Օրհնեցինք մեր նուիրական մասունքներով՝ Տէրունական փրկարար Խաչով, Սուրբ Գեղարդով, Աջով մեր Լուսաւորիչ Հայրապետի: Մեր հոգու ամենաջերմ աղօթքներով հայցեցինք բարեխօսութիւնը մեր սուրբ հայրերի, որպէսզի նորօրհնեալ միւռոնը Սուրբ Հոգու ներգործութեամբ դառնայ «կնիք երկնաւոր անապականութեան», երկնային եօթնարփեայ շնորհները բաշխի մեր կեանքին եւ ինչպէս Աստուած է տնօրինել՝ լինի ու միշտ մնայ սրբութիւն մեզ եւ բոլորի համար: Այսօր նիւթը Սուրբ Հոգու երկնային շնորհներով սքանչելագործ զօրութիւն է ստանում,

digitised by A.R.A.R.@

այսօր նիւթը հայցով ու աղօթքով բանական ու շնչաւոր է դառնում. «Երդուեցնում եմ քեզ, նիւթ ձէրի, յանուն Ամենակարող Հօր, ... որպէսզի ամէն ներգործութիւն սատանայի եւ զօրութիւն նրա քեզանից հալածեալ լինի, որպէսզի օրհնութեամբ զօրանաս՝ քեզանով օծեալին դրոշմելու Սուրբ Հոգին՝ յանուն Ամենակարող Հօր եւ Որդու՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի» (Կանոն միւռոնի օրհնութեան):

Աստուծոյ բարերար Կամքով սուրբ եւ սրբարար է միւռոնը: Լուսանիւթ, անուշաբոյր միւռոնով սրբւում են եկեղեցիները, դառնում՝ Աստծոյ տուն: Միւռոնով օծուելով՝ եկեղեցականները կոչւում են Տիրոջ Սուրբ Սեղանի սպասաւորութեան: Շնորհակիր եւ շնորհաբաշխ միւռոնով մկրտութեան աւազանից ծնւում ենք որպէս Աստծոյ սեփական ժողովուրդ, որպէս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի: Սուրբ միւռոնի դրոշմով ճանաչում, ապրում, զգում եւ պահպանում ենք մեր հայ եւ քրիստոնեայ ինքնութիւնը, մեր ազգային ամբողջականութիւնը: Միւռոնադրոշմ յաղթել ենք վասն հաւատի եւ վասն հայրենեաց կենաց եւ մահու մեր բոլոր պատերազմները, մեր գոյութեան եւ լինելութեան բոլոր մարտերը: Միւռոնի զօրութեամբ ու լոյսով միաւորել եւ միաւորում ենք մեր անցեալը, ներկան եւ մեր զաւակների ապագան:

Միւռոնօրհնութիւնը, սիրելի հայորդիներ, կոչ է եւ հրաւէր ազգիս՝ մնալու սրբութեան շնորհի մէջ, մերժելու չարը ու չարի գործերը եւ մեր կեանքում անստուեր պահպանելու Տիրոջ Աւետարանի լոյսը: Միւռոնօրհնութիւնը պատգամ է ապրելու Քրիստոսով, ընթանալու Քրիստոսի հետ, քանզի սուրբ միւռոնով ի Քրիստոս մկրտուած Քրիստոսով հանդերձաւորուեցինք (հմմտ.՝ Գաղ. Գ 27): Տիրոջ հետ, տէրունապարգեւ սիրով միայն պիտի գերակայեն մեր կեանքում բարութիւնն ու արդարութիւնը, մեր սրտերի մէջ անսասան ու անբիծ պիտի մնայ մեր հայրերի սուրբ հաւատքը եւ մեր ուղին լինի բազմարդիւն ու բարեյոյս:

Այսօր մենք՝ Հայրապետ հայոց, քաջալեր ենք ու լաւատես, լի՝ ապագայի յոյսերով, քանզի Հայաստան եւ Արցախ մեր հայրենի աշխարհում, վերազարթօնք ապրող մեր Եկեղեցու մէջ, մեր անկախ պետական կեանքում, բայց մանաւանդ մեր ժողովրդի առողջ նեբաշխարհում մենք զգում եւ տեսնում ենք արթնացող եւ հասունացող կամքն ու պահանջը մաքրուելու, սրբուելու, արդար հասարակութիւն եւ պետութիւն կառուցելու: Տեսնում ենք կամքն ու պահանջը ամոքելու ազգային վէրքերը, յաղթահարելու եկեղեցական մեր կեանքի դժուարութիւնները, ժամանակի բերած բաժանումներն ու տարակարծութիւնները, որպէսզի հայոց անդաստանում միշտ եւ առյաւէտ լինենք մէկ եւ միասնական՝ մէկ ազգ, մէկ հաւատ, մեկ եկեղեցի՝ միասնական Հայրենիքով եւ միակամ ու միախորհուրդ ընթանանք դէպի նոր ձեռքբերումներ, մեր արդար իղձերի ու արժանի նպատակների իրագործման Աստուծոյ կողմից նախախնամուած բարի հանգրուաններ:

Լաւատես ենք ու քաջալար Աստուծոյ՝ ազգիս պարգեւած բարիքներից, աշխարհասփիւռ հայ կեանքի մէջ պտղաբերող բարի գործերից, իրականութիւն դարձող ծրագրերից, որ ծառայում են մեր ժողովրդի բարօրութեանը, մեր Հայրենիքի բարգաւաճումին, մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը: Միաւորենք ու զօրացնենք մեր ջանքերը, որ հայրենի մեր երկիրը ծաղկուի ապրի աստուածաշնորհ խաղաղութեան ու ազատութեան մէջ եւ հզօրանայ տիրաւանդ նշմարիտ սիրով, իր զաւակների նուիրումով, տաղանդով ու արարումով: Խնամք տանենք ու հոգանք, որպէսզի մեր աշխարհասփիւռ եկեղեցին միշտ պայծառ լինի նախնեաց աւանդով ու կարգաւորութեամբ,

digitised by A.R.A.R.@

էջմիածնակնիք հայ հոգուն հաւատարիմ աստուածասէր ժողովրդով: Թող լուսեղէն միւռոնի ազգահաւաք հրաշագործ զօրութեան շնորհներով արգասաւորուի միութիւնն ու մէկ առաքելութիւնը մեր Սուրբ Եկեղեցու եւ միաբանութիւնը մեր ժողովրդի:

Միւռոնօրհնութեան այս սրբազան օրը, սիրելի բարեպաշտ հաւատացեալներ, հոգու հայեացքով վերստին տեսնենք մեր Տիրոջ էջքը հրեշտակների զօրքերի հետ, ոսկէ մուրճի հարուածով անդնդային ուժերի կործանումը, տեսնենք երկնանման խորանից աղբիւրացող կենդանարար ջրերով համատարած ողողումը Հայոց աշխարհի, որը Լուսաւորչատեսիլ պատկերն է մեր ժողովրդի մկրտութեան, Ս. Հոգով վերբստին ծննդի, եւ զօրանանք հոգով, տոգորուենք նոր յոյսերով, վերածնուող կեանքի նոր զարթօնքով:

Ժողովուրդ հայոց, ժողովուրդ շնորհընկալ եւ յաղթական, որ դարեդար ապրածդ կեանքով, սխրալի վկայութիւններով հաւատարիմ ես Ս. Էջմիածնով Աստծոյ հետ հաստատած ուխտիդ, հանապազ նորոգուիր հաւատքով, պայծառացիր եկեղեցաշէն եւ հայրենանուէր գործոց արդար ու բարի արգասիքներով, որ Աստծոյ օրհնութեան ներքոյ յաւէրժ անսասան մնայ Քրիստոսապսակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, միշտ ապրի ազատ ու ինքնիշխան, Արարատով յաւէրժ թագադրեալ մեր հայրենիքը, եւ հայ կեանքը լոյսով նայի գալիքին:

Այս մաղթանքով եւ զգացումներով ողջունում ենք այստեղ ներկայութիւնը Հայաստանի Հանրապետութեան նախագահ Տիար Սերժ Սարգսեանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակո Սահակեանի, հայոց պետական աւագանու՝ մաղթելով յաջողութիւններ վասն Հայաստանի եւ Արցախի առաջընթացի, վասն Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու արդար իրաւունքի:

Ի Քրիստոս սիրոյ եղբայրական ողջոյն ենք յղում Նուիրապետական մեր Աթոռների Գահակալներին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին՝ հայցելով իրենց կեանքին Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնը:

Ուրախ ենք մեր ժողովրդի համար նուիրական այս օրը Սուրբ Էջմիածնում ողջունելու հոգեւոր մեր եղբօրը՝ Նորին Ամենասրբութիւն Բարդուղիմէոս Ա Տիեզերական Պատրիարքին, հայցելով Տիրոջ հովանին բարեպաշտ իր հօտին:

Ի Քրիստոս սիրոյ մեր ողջոյնն ենք բերում նաեւ հոյր եկեղեցիների շնորհազարդ հոգեւորականներին, Հայաստանի Հանրապետութիւնում հաւատարմագրուած դեսպանների, օտարերկրեայ պետական եւ հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներին՝ մաղթանքով Տիրոջ հանապազ առաջնորդութիւնը իրենց առաքելութեանը:

Հայրական օրհնութեամբ ողջունում ենք մեր Եկեղեցու Թեմական Առաջնորդներին, թեմական եւ համայնքային վարչական մարմինների պատուարժան անդամներին, ուխտապահ եկեղեցականաց ողջ դասին, ձեզ, ուխտաւոր զաւակներ մեր, եւ համայն հաւատացեալ մեր ժողովրդին՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս:

Հայցենք միասնաբար, որ Բարձրեալը խաղաղութիւն պարգեւի աշխարհին, Իր շնորհի ներքոյ խաղաղ պահի մեր հայրենիքը եւ ապահով ու անվրդով՝ մեր ժողովրդին ի սփիւռս աշխարհի:

Թող նորօրհնեալ միւռոնը, ինչպէս Աստուած է տնօրինել՝ լինի ու միշտ մնայ սրբութիւն մեզ եւ բոլորի համար. ամէն:

digitised by A.R.A.R.@